№ 2 (273)

# «ՀՐԱԶԴԱՆ» ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍՏԱԴԻՈՆ

# ЦЕНТРАЛЬНЫЙ СТАДИОН „РАЗДАН"



ՖՈՒՏԲՈԼԻ ՍՍՀՄ 51-ՐԴ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

51 ЧЕМПИОНАТ СССР ПО ФУТБОЛУ

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՒՄԲ

## ВЫСШАЯ ЛИГА

ԱՊՐԻԼԻ 30 ՇԱԲԱԹ

30 АПРЕЛЯ СУББОТА

## «ԱՐԱՐԱՏ» — «ԴՆԵՊՐ»

(ԵՐԵՎԱՆ) (ԴՆԵՊՐՈՊԵՏՐՈՎՍԿ)

## „АРАРАТ" — „ДНЕПР"

(ЕРЕВАН) (ДНЕПРОПЕТРОВСК)

ԽԱՂԻ ՍԿԻԶԲԸ՝ ԺԱՄԸ 19-ԻՆ

НАЧАЛО ИГРЫ В 19 ЧАСОВ



# ՖՈՒՏԲՈԼԱՅԻ՞Ն ԳԱՐՈՒ՞Ն

*Գարունը տնօրինություն է անում ամենուր: Նրա շունչը զգացվում է նաև ֆուտբոլի մրցումներում: Թիմերը սկսում են դուրս գալ մարզադահլիճներից և խաղալ կանաչ, խնկական խաղադաշտերում: Նշանակում է՝ «հյուսիսային» և «հարավային» թիմերի համար ստեղծվում են հավասար, նորմալ պայմաններ մրցակցության, երբ ուժեղագույններին ի հայտ բերելու համար: Բնականաբար, խաղերն էլ այսուհետև ավելի սուր, անհաշտ բնույթ են կրելու:*

*Անշուշտ, պետք է հաշվի առնել, որ սպորտում միշտ կլինեն հաղթողներ ու պարտվողներ, վերելքներ ու վայրէջքներ: Արարատցիների համար շատ կարևոր է մշտապես հիշել, որ կայուն ու բարձր ցուցանիշների հասնելու, թիմի մարտունակությունը պահպանելու համար հարկ է կարողանալ հաղթահարել բոլոր հնարավոր արգելքները: Խոսքն առաջին հերթին խաղացողների վնասվածքների, հոգնածության, կոլեկտիվում ծագող որևէ պրոբլեմի մասին է: Համերաշխ համագործակցություն, գիտակից վերաբերմունք դրսևորելու դեպքում կարելի է և պետք է շրջանցել բոլոր դժվարությունները:*

*ՍՍՀՄ առաջնությունն աստիճանաբար մտնում է հունի մեջ, թիմերն էլ սկսում են ցուցադրել իրենց լավագույն խաղը: Ֆուտբոլը դառնում է ավելի հետաքրքիր ու գրավիչ: Առջևում մրցաշրջանի գլխավոր մրցամարտերն են:*

# ՈՎ ՈՒՄ ՀԵՏ

Ըստ բվարկության, այսօրվա վեց հանդիպումները համարվում են 8-րդ տուրի խաղեր: Առաջատար թիմերի բացակայությունը բացատրվում է նրանով, որ երեք օր առաջ խաղեր անցկացրին մեր երկրի և՛ ազգային հավաքականը, և՛ օլիմպիական թիմը: Սակայն դա բնավ էլ չի նշանակում, որ խաղերը պակաս հետաքրքրություն են ներկայացնում: Դրանք բոլորն էլ սկզբունքային նշանակություն ունեցող մրցամարտեր են և անպայման որոշակի փոփոխություններ կմտցնեն մրցաշարային աղյուսակում:

*Ահա այսօրվա մրցակիցները.*

«Արարատ» — Դնեպր»
«Նեֆթչի» — «Չեռնոմորեց»
«Ժալգիրիս» — «Մետալիստ»
«Լոկոմոտիվ» — «Տորպեդո»
«Զենիթ» — «Կայրատ»
«Դինամո» Թ. — «Շախտյոր»

# ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ՞Ն ԷԼ ՍԿՍԵՑ

*Այս մրցաշրջանում, ինչպես տարիներ առաջ, մեր հանրապետությունը երկրորդ խմբի թիմերի ասպարեզում կներկայացնեն չորս կոլեկտիվ՝ Լենինականի «Օլիմպիան», Կիրովականի «Լոռին», Հոկտեմբերյանի «Սպարտակը» և Երևանի «Իսկրան»: Վերջին շրջանում, ինչպես հայտնի է, մեր թիմերը բավարարվում էին համեստ ցուցանիշներով: Կխախտվի՞, արդյոք, այդ տխուր ավանդույթն այս անգամ:*

*Պետք է խաղալ պատվախնդրության զգացումով, հաղթանակի տենչով, անպայման բարձր տեղեր գրավելու հաստատ մտադրությամբ: Հուսով լինենք, որ երկրորդ խմբի թիմերն այս տարի ավելի շատ հաճույք ու բավականություն կպատճառեն մարզասերներին:*

# ԵՐԿՈՒ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ինչպես, հավանաբար, գիտեք, ֆուտբոլի Սովետական Միության գավաթի համար պայքարն այժմ շարունակում են չորս թիմեր: Կիսաեզրափակիչ խաղերը նշանակվել են մայիսի 18-ին: Սակայն պատվավոր մրցանակի համար հաջորդ՝ 1988—89 թվականների խաղարկությունը սկսվելու է ավելի վաղ՝ արդեն մայիսի 2-ին: Հիշեցնենք, որ նախնական խաղերին մասնակցելու են առաջին խմբի 22, ինչպես նաև երկրորդ խմբի ուժեղագույն թիմերը:

Աբովյանի «Կոտայքը» առաջին խաղն անցկացնելու է Թբիլիսիում, որտեղ հանդիպելու է «Շևարդենի» թիմի հետ: Ինչ վերաբերում է «Արարատին» ապա նա ասպարեզ կմտնի 1/16 եզրափակիչից: Երևանցիների մրցակիցը կլինի «Դինամո» (Բրեստ), «Կարպատներ» (Լվով), «Բալթիկա» (Կալինինգրադ) — «Պրիկարպատյե» (Իվանո Ֆրանկովսկ) թիմերից մեկը:

## НАШИ ГОСТИ

### ВСЕГДА ЗАРЯЖЕННЫЕ НА ПОБЕДУ

Одно из приятных явлений последних чемпионатов страны — это бесспорно неожиданный взлет сравнительно молодого коллектива клуба «Днепр». Было время, когда многие любители футбола, даже авторитетные специалисты утверждали, что все это временно, случайно. Но именно время показало, что на футбольной карте нашей страны появился новый и настоящий футбольный центр, что «Днепр»—команда высоких потенциальных возможностей, достойный претендент на самые высокие места. Вот и в прошлом году почти до самой финишной черты сезона будущие чемпионы — спартаковцы столицы чувствовали дыхание преследовавших их футболистов из Днепропетровска. Впрочем, и серебряные медали, завоеванные в итоге игроками «Днепра» — убидительное дaказательство того, что команда эта самобытная, интересная, со своим почерком игры. Причем, стиль игры наших гостей строится не только на умении одних исключительно одаренных футболистов, таких как, скажем, Протасов, Литовченко, Таран. Главное игровое кредо коллектива—это максимальное использование индивидуальных качеств всех игроков команды, постоянное нагнетание темпа и размашистая игра по всему полю. Постоянно играть в таком ключе, привлекать все большее число зрителей обязывает и то обстоятельство, что «Днепр» — клуб хозрасчетный, кстати, первый такой клуб в нашей стране.

Следует признать, что готовясь к новому сезону, руководители команды испитывали определенные трудности. Ведь команду покинули два стержневых мастера, игроки сборной страны Протасов и Литовченко, и в связи с этим необходимо было перекраивать состав, найти достойную им замену. Сумели ли они решить эту проблему? Пока сложно ответить на этот вопрос, тем более, что уже в ходе нынешнего чемпионата надолго выбыл еще один ведущий игрок-член олимпийской сборной страны Тищенко. Но ясно и то, что несмотря на все сложности, «Днепр» сохранил боеспособность и в ряде матчей блеснул умением демонстрировать острокомбинационный футбол. Он и сейчас заряжен на победу и готов дать бой любому сопернику.

## ТАК ОНИ ИГРАЛИ

Матчи сегодняшних соперников по своим итогам можно разделить на два этапа. В первую пору, в начале семидесятых годов, соперничество протекало ровно, обоюдоостро. Но затем футболистам Днепропетровска удалось добиться ощутимого преимущества. Более того, было время, когда они одержали восемь побед кряду! Таких неудач наша команда не терпела никогда. И только во втором круге сезона—86 «Арарат» сумел, наконец, нарушить печальную для себя традицию.

Приводим результаты всех матчей «Арарат» — «Днепр»:

| | | |
|---|---|---|
| 1972 г. | 0:0 (Д) | 2:3 (Е) |
| 1973 г. | 1:0 (Е) | 1:1 (Д) |
| 1974 г. | 0:1 (Д) | 1:1 (Е) |
| 1975 г. | 3:0 (Е) | 0:1 (Д) |
| 1976 г. | 3:2 (Е) | 0:0 (Д) |
| 1977 г. | 1:0 (Е) | 1:2 (Д) |
| 1978 г. | 1:0 (Д) | 1:0 (Е) |
| 1981 г. | 3:0 (Е) | 1:3 (Д) |
| 1982 г. | 1:1 (Д) | 1:3 (Е) |
| 1983 г. | 0:2 (Е) | 0:4 (Д) |
| 1984 г. | 1:3 (Е) | 0:2 (Д) |
| 1985 г. | 3:5 (Е) | 0:2 (Д) |
| 1986 г. | 1:2 (Д) | 3:3 (Е) |
| 1987 г. | 2:1 (Е) | 0:2 (Д) |

## ԹԻՄԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ / СОСТАВЫ КОМАНД

### «ԴՆԵՊՐ» / «ДНЕПР»

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ավ Գորոդով Վիկտոր | 1961 | 53 | — | мс | Городов Виктор |
| ավ Բաշկիրով Սերգեյ | 1959 | 128 | 1 | см | Башкиров Сергей |
| ավ Վիշնևսկի Իգոր | 1957 | 115 | 1 | см | Вишневский Игорь |
| ավ Պուչկով Սերգեյ | 1962 | 123 | 3 | мс | Пучков Сергей |
| ավ Սորոկալետ Ալեքսանդր | 1957 | 198 | 5 | мс | Сорокалет Александр |
| ավ Բագմուտ Վլադիմիր | 1962 | 84 | 4 | мс | Багмут Владимир |
| ավ Շոխ Անտոն | 1960 | 187 | 20 | мс | Шох Антон |
| ավվ Եվտուշենկո Վադիմ | 1958 | 332 | 59 | змс | Евтушенко Вадим |
| ավ Կուդրիցկի Նիկոլայ | 1962 | 40 | 3 | | Кудрицкий Николай |
| ավ Տարան Օլեգ | 1960 | 172 | 48 | мс | Таран Олег |
| ավ Լյուտի Վլադիմիր | 1962 | 181 | 33 | мс | Лютый Владимир |
| ավ Չերեդնիկ Ալեքսեյ | 1960 | 98 | 5 | мс | Чередник Алексей |
| ավ Շախով Եվգենի | 1962 | 35 | 5 | мс | Шахов Ввгений |
| ավ Սոն Էդուարդ | 1964 | 32 | 3 | мс | Сон Эдуард |

Թիմի գլխավոր մարզիչ՝ Ուկր. ՍՍՀ վաստ. մարզիչ, ավ Ե. Կուչերևսկի

Главный тренер — засл. тр. УССР, мс **Е. Кучеревский**

### «ԱՐԱՐԱՏ» / «А Р А Р А Т»

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Պոդշիվալով Ալ.-դր | 1964 | 98 | — | | Подшивалов Александр |
| ավ Կիրակոսյան Հովհ. | 1956 | 199 | 7 | мс | Киракосян Ованес |
| Սարգսյան Ալբերտ | 1963 | 139 | 10 | | Саркисян Альберт |
| մկավ Խաչատրյան Աշոտ | 1959 | 279 | 13 | мсмк | Хачатрян Ашот |
| Այվազյան Արա | 1960 | 50 | 2 | | Айвазян Ара |
| Ենգիբարյան Գուրգեն | 1964 | 17 | — | | Енгибарян Гурген |
| Քամալյան Գևորգ | 1964 | 12 | — | | Камалян Геворг |
| Մարգարյան Մկրտիչ | 1959 | 158 | 3 | | Маркарян Мкртич |
| Օսիպյան Էրաստ | 1965 | 20 | — | | Осипян Эраст |
| Խաշմանյան Աբրահամ | 1967 | 31 | 1 | | Хашманян Абраам |
| ավ Մելիքյան Բաբկեն | 1960 | 216 | 31 | мс | Меликян Бабкен |
| ավ Գալստյան Պողոս | 1961 | 102 | 14 | мс | Галстян Погос |
| Քոչարյան Ռոբերտ | 1963 | 76 | 16 | | Кочарян Роберт |
| Վերանյան Էդուարդ | 1963 | 45 | 7 | | Веранян Эдуард |
| Մարկոսյան Կարեն | 1968 | 12 | 1 | | Маркосян Карен |

Թիմի գլխավոր մարզիչ՝ Հայկ. ՍՍՀ վաստ մարզիչ, մկավ Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Главный тренер каманды — засл тр. Арм. ССР, мсмк **А. Андреасян.**

Игру судит судья всесоюзной категории **Р. Юшка** (Вильнюс). Ему помогают судьи республиканской категории **А. Резепов** (Вильнюс) и **В. Жидкус** (Каунас).
Инспектор матча — **И. Авакумов** (Москва).

**Составитель и ответственный за выпуск М. НАЗАРЯН**

Заказ 526 Тираж 4000 Цена 15 коп.

г. Ереван типография ИПО «Периодика»